28.11.2024թ.

համայնք Մարտունի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարտունու համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժին ստացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի N 02//9808-2024 - 26/11/2024 գրությունը:

ՈՒսումնասիրելով գրության բովանդակությունը և կից փաստաթղթերը, առաջարկվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության գյուղատնտեսական վարելահողից փոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր նոր գերեզմանատուն հիմնելու համար և բարձրացված հարցը համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.05.2023թ. № 04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետի պահանջների նշված հարցը ներկայացնել Մարտունի համայնքի առաջիկա նիստին քննարկելու համար:

Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պ/կ՝ Կ. Դավթյան

Կատարող՝ Բ.Գասպարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ ,ԿենտրոնականհրապարակN7
Հեռ. 060650035
Կայքgegharkunik.mtad.am
Էլ. փոստgegharkunik@mta.gov.am
N_____
------- ----------2024թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովեյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների պայմանները:

Առաջարկվում է վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մարզպետի աշխատակազմ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2024-11-26 14:24:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքներով՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՀԵԿ վարչության
Հողաշինության բաժին Մ. Ղուրշուդյան
Հեռ. 060650611

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 453

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Արծվանիստ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Մարտունի համայնքի (Արծվանիստ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Արծվանիստ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (Արծվանիստ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կողմից ներկայացված պահանջները (կցվում են):

4. Մարտունի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Արծվանիստ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (Արծվանիստ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «25» «նոյեմբերի» 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԳՍ/14.1/35539-2024

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ե. Վարդանյանին

Ի պատասխան Ձեր 24.10.2024թ.
№ 01/11.2/16368-2024 գրության

Հարգելի՛ պարոն Վարդանյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայր գտնվող 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասը գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից, նոր գերեզմանատուն հիմնելու համար, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողերի փոխելու վերաբերյալ առարկություն չունի՝ փաթեթում առկա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ և «Տրանսգազ» ՍՊ ընկերությունների ներկայացրած պահանջները ապահովելու պայմանով:

Invalid signature

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. Սանոսյան

Կատարող՝ Տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,
Լ. Մելքումյան, հեռ. 010515127

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
REPUBLIC OF ARMENIA
MINISTER OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТР ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 1/02.6/11888

«_____» «_____» 2024թ.

Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
պարոն Եղիազար Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան

Ի պատասխան Ձեր 2024 թվականի հոկտեմբերի 24-ի N01/11.2/16368 գրության՝ հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունը Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասը, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից, նոր գերեզմանատուն հիմնելու համար, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողերի փոխելու վերաբերյալ առարկություններ չունի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 9)-րդ կետի «ա» ենթակետի (գերեզմանոցներ կամ դիակիզարաններ կամ դիահերձարաններ, պաթոլոգիաանատոմիկներ կամ դիարաններ)՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հարգանքով՝

Invalid signature

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Հակոբ Սիմիդյան

Հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն
Աշոտ Սուքիասյան, 011 818 525

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 501 | +374 11 818 506

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

N 01/14.3/33484-2024

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.10.2024 թ.
հմ. 01/11.2/16368-2024 գրության

Հարգելի՛ պարոն Վարդանյան

Հայտնում ենք, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 1.5375 հա մակերեսով (ծածկագիր՝ 05-016-0137-0040) գյուղատնտեսական նշանակության հողամասերում նախարարության մասնագետների կատարած տեղազննությամբ պարզվել է, որ պատմության և մշակույթի հուշարձաններ, ինչպես նաև հնագիտական օբյեկտների արտաքին նշաններ և հետքեր չկան, ուստի նախարարությունը չի առարկում նշված հողամասերի նպատակային նշանակության փոփոխությանը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիայի:

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի № 438 որոշման 43-րդ կետի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Invalid signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Կատարող՝ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության
հուշարձանների պահպանության տարածքային գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ
Հայկ Դավեյան, հեռ.՝ (+374) 77-787-057

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

---------- N ----------

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Կարեն ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

2024 թվականի հոկտեմբերի 18-ի
N 01//8576-2024 գրություն

Հարգելի պարոն Սարգսյան

Ձեզ եմ տրամադրում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասը գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից, նոր գերեզմանատուն հիմնելու համար, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքը, դրական եզրակացությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների պայմանները:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր

հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 5 ֆայլ:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133 Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Գևորգյան, հեռախոս՝ 011 621 814